

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1257-Ն որոշման
մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու
մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 201_ N ____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1257-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, անվավեր ճանաչման, չեղարկման կարգը և ոչ էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման դեպքերը սահմանելու մասին» N 1257-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 27-րդ կետից հանել «հատուկ,» բառը.

2) 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված N 3 հավելվածը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին և 1.2-րդ կետերով.

«1.1. Ոչ էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքից ապրանքի արտահանման դեպքերում.

2) օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ապրանքի մատակարարման վայրը Հայաստանի Հանրապետությունից դուրս համարվելու դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվարկային փաստաթուղթ դուրս գրողը և ստացողը հաշվառված են հարկային մարմնում.

3) կապի կամ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման

պատճառով հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու անհնարինության դեպքերում:

1.2. Սույն հավելվածի 1.1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված՝ ոչ էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերը դուրս գրելու դեպքերում գործարքների փաստաթղթավորումն իրականացվում է թղթային կրիչի վրա լրացված և հարկ վճարողի կողմից վավերացված (ստորագրված) հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթով, որը պետք է պարունակի օրենսգրքի 55-րդ հոդվածին համապատասխան հաշիվ վավերագրում ներառման ենթակա տվյալները՝ բացառությամբ հաշիվ վավերագրի սերիայի և համարի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: